Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-501-24.01.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 5-րդ մասում «փրկարար ծառայության ծառայողների,» բառերից հետո լրացնել «դատախազների,» բառը:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ նախադասությունը հանել:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) վերնագրում «հավելավճարները» բառից հետո լրացնել «և հավելումները» բառերը.

2) 3-րդ մասում «Դատախազներին» բառը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված՝ դատախազներին» բառերով.

3) լրացնել նոր՝ 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Դատախազին, որպես առանձնակի ռիսկային, բարդություններով պայմանավորված և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձի, սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսի չափով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ապրիլի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-501-24.01.2023-ՊԻ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջին ընթերցում

Կ-501-24.01.2023-ՊԻ-011/1

Հոդված 1. «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 5-րդ մասում «փրկարար ծառայության ծառայողների,» բառերից հետո լրացնել «~~Հայաստանի Հանրապետության դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց~~դատախազների,» բառ~~երը~~ը:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ նախադասությունը հանել:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) վերնագրում «հավելավճարները» բառից հետո լրացնել «եւ հավելումները» բառերը.

2) 3-րդ մասում «Դատախազներին» բառը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված՝ դատախազներին» բառերով.

3) լրացնել նոր՝ 4-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4. Դատախազին, որպես առանձնակի ռիսկային, բարդություններով պայմանավորված եւ մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձի, սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսի չափով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ապրիլի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-501-24.01.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	1. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 5-րդ մասում «փրկարար ծառայության ծառայողների» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց,» բառերը, որի արդյունքում նախատեսվում է, որ լրացուցիչ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			աշխատավարձի հիմնական աշխատավարձի 30 տոկոսը չգերազանցելու պահանջը ի թիվս այլի չի տարածվելու նաև Հայաստանի Հանրապետության դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող անձանց վրա: «Հանրային ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ինքնավար պաշտոններ են՝ (...) գլխավոր դատախազի և դատախազների (...) պաշտոնը»: «Դատախազության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին համաձայն՝ դատախազ են համարվում գլխավոր դատախազը, նրա տեղակալները, զինվորական դատախազը, Երևան քաղաքի դատախազը և այլ դատախազներ: Այսինքն՝ դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ են համարվում «Դատախազության մասին» օրենքով «դատախազ» հասկացության մեջ ընդգրկված բոլոր դատախազները: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-		

			դդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»: Հիմք ընդունելով վերը նշված իրավական դրույթները և այն հանգամանքը, որ Օրենքում կիրառվում է միայն «դատախազ» եզրույթը՝ առաջարկում ենք Նախագծում ևս կիրառել միևնույն հասկացությունը:		